Արձանագրություն N 3

<<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/25-2>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» օգոստոսի 2016թ.

Ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամ՝ Լ. Հարությունյանը (նիստը նախագահող)

Հանձնաժողովի անդամ՝ Վ. Սարգսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մկրտչյանը

Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման մասին

Ընդունել ի գիտություն, որ

ա) <<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/25-2>> ծածկագրով գնման ընթացակարգի գնման առարկայի նախահաշվային գներն են,

Չափա-բաժնի համարը	ծառայության անվանումը	նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	2	
1	Հեռախոսակապի ծառայություններ N 1	187500
2	Հեռախոսակապի ծառայություններ N 2	300000
3	Հեռախոսակապի ծառայություններ N 3	250000
4	Հեռախոսակապի ծառայություններ N 4	187500

5	Հեռախոսակապի ծառայություններ N 5	500000

Հանձնաժողովը որոշեց.

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով գնահատող հանձնաժովը որոշեց նիստը ընդհատել և շարունակել 2016 թվականի օգոստոսի 18-ին ժամը 09:30-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 4-րդ հարկ, N419սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

Անդամ (նիստը նախագահող) _____ Լ. Հարությունյան

Անդամ՝ _____ Վ. Սարգսյան

Քարտուղար՝ _____ Ա.Մկրտչյան

Արձանագրություն N 4

<<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/25-2>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» օգոստոսի 2016թ.

ժամը 09:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամ՝ Լ. Հարությունյանը (նիստը նախագահող)

Հանձնաժողովի անդամ՝ Վ. Սարգսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մկրտչյանը

Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն,որ.

1.1 սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները,

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ	Հայաստան, 0015, ք. Երևան Արգիշտիի փող., 4/1 շենք Հեռ. +374-60-771111 էլ. Փոստի հասցե՝ info@mtc.am
2	«Արմենտել» ՓԲԸ	Հայաստան, 0014, Երևան Սիարոնյան փող., 2 շենք էլ. Փոստի հասցե՝ corp_tender@beeline.am
3	<<Յուքոմ>> ՍՊԸ	Հայաստան, 0015, Երևան Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք Հեռ՝ +374-11-400400 էլ. Փոստի հասցե՝ corporate@ucom.am

1.2 համակարգում 11.08.2016թ. դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել,

1.3 «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթում առկա են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը : «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում 1-ին և 2-րդ չափաբաժիններով ներկայացված առաջարկված ընդհանուր գինը սխալ է նշված,

1.4 «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթում բացակայում է լիազորված անձի լիազորագիրը,

1.5 <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ -ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթում առկա են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ -ի կողմից ներկայացված գնային առաջարկում 1-4 չափաբաժինների համար առաջարկված ընդհանուր գինը նշված է ամսական, սակայն հրավերի <<Հայտի գնային առաջարկը>> բաժնի 4.2 կետում նշվում է, որ գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ 0:

2. «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով հետևյալն են.

Չափա-բաժնի համար ը	ապրանքի անվանումը	Մասնակցի առաջարկած գինը (ՀՀ դրամ)		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդամենը
		3	4	5
1	Հեռախոսակապի ծառայություններ N 1 *	99876	19975	119850
2	Հեռախոսակապի ծառայություններ N 2 *	124376	24875	149250
3	Հեռախոսակապի ծառայություններ N 3	183333	36667	220000
4	Հեռախոսակապի ծառայություններ N 4	235000	47000	282000

*Ընդամենը դաշտում գումարը սխալ է նշված

«Արմենտել» ՓԲԸ-ի կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով հետևյալն են.

Չափաբաժնի համարը	ապրանքի անվանումը	Մասնակցի առաջարկած գինը (ՀՀ դրամ)		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդամենը
1	2	3	4	5
1	Հեռախոսակապի ծառայություններ N 1	86000	17200	103200
2	Հեռախոսակապի ծառայություններ N 2	107500	21500	129000
3	Հեռախոսակապի ծառայություններ N 3	157666.67	31533.33	189200
4	Հեռախոսակապի ծառայություններ N 4	118250	23650	141900

<<Ղ Տելեկոմ>> ՓԲԸ-ն առաջարկում է պայմանգիրը կատարել հետևյալ գներով (գները ներկայացված են ամսական կտրվածքով)

Չափաբաժնի համարը	ապրանքի անվանումը	Մասնակցի առաջարկած գինը (ՀՀ դրամ)		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդամենը
1	2	3	4	5
1	Հեռախոսակապի ծառայություններ N 1	18750	3750	22500
2	Հեռախոսակապի ծառայություններ N 2	43750	8750	52500
3	Հեռախոսակապի ծառայություններ N 3	30000	6000	36000
4	Հեռախոսակապի ծառայություններ N 4	22500	4500	27000

2.1 Ոչ մի մասնակից 5-րդ չափաբաժնի համար գնային առաջարկ չի ներկայացրել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

3.1 Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն մերժել <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը,

3.2 Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն մերժել <<Յուքոմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,

3.3 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը՝ <<ՏԿՆ-ՇՀԾՁԲ-15/25-2>> ծածկագրով գնման ընթացակարգը 5-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած,

3.4 Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջներին համապատասխան կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել <<Արմենտել>> ՓԲԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը (ներկայացնել լիազորագիրը):

3.5 Գնահատող հանձնաժովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 19-ին ժամը 17:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 4-րդ հարկ, N419սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

Անդամ Լ. Հարությունյան
(նիստը նախագահող)

Անդամ՝ Վ. Սարգսյան

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան